ՋԱՎԱԽԵՑԻ. ԿՅԱՆՔՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ
(Ծննդյան 140-ամյակի առթիվ)

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Ուսուցիչ, հայ մամուլի երկարամյա թղթակից, քահանա, հայ հասարակական-մտավորական շրջանների անվանի ներկայացուցիչ Ջավախեցին՝ Ղազարոս Տեր-Գրիգորյանը, բանաստեղծ Վահան Տերյանի ավագ եղբայրն է: Ծնվել է 1874 թ. Ջավախքի Գանձա գյուղում[1]: Հոր՝ Սուքիաս Տեր-Գրիգորյանի ընտանիքում ծնված տասներկու երեխաներից երեք աղջիկը և մեկ որդին վաղ հասակում մահացել էին, մնացյալ ութից չորսը աղջիկներ էին, չորսը՝ արու զավակներ: Որդիներից Ղազարոսն ավագն էր, կրտսերը՝ Վանիկը, ապագա բանաստեղծ Վահան Տերյանը: Գյուղական դպրոցն ավարտելուց հետո պատանի Ղազարոսը շարունակում է իր ուսումը և ավարտում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը:

Ղ. Տեր-Գրիգորյանի մանկության ու պատանեկության պատկերներն արտացոլված են նրա եղբայրների՝ Արամի և Ներսեսի[2], ինչպես նաև իր՝ Ջավախեցու՝ Վահան Տերյանին նվիրված հուշագրություններում, ուր զանազան պատմություններով, գեղեցիկ ակնարկներով, հուզառատ ու չխամրող գույնե-

---

[1] *Ջավախեցու համառոտ կենսագրության և հրատարակած գործերի մասին տե՛ս Ներսիսյանցիներ (1824–1924), կազմողներ Սմբատ Ավագյան, Գեորգ Փերիխանյան, Երևան, 1975, էջ 165, 174, Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Երևան, 1983, էջ 479, Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Գրական տեղեկատու (1934–1986), Երևան, 1986, էջ 464–465, Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Երևան, 2003, էջ 246, Ով ով է: Հայեր, կենսագրական հանրագիտարան, հ. 2, Երևան, 2007, էջ 357, Վ. Մ ա ղ ա լ յ ա ն. Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.), Երևան, 2012, էջ 92–94:*

[2] *Միջնեկ եղբայրներից Արամ Տեր-Գրիգորյանն իր հուշերում այսպես է նկարագրում Ղազարոսին. □Ղազարոսը, որ հետո հայ մամուլի մեջ հայտնի դարձավ □Ջավախեցի□ անունով, մի քանի ընդհանուր գծեր ունի Վահանի հետ: Նա, որպես ծնողներիս մեծ որդին, մի քիչ երես առած և քնքշությունների սովորած էր: Միրում էր գեղեցիկ հագնվել, փայլուն իրեր ձեռք բերել, մատներին մատանի կրել, ձի նստել, սիրահարվել, ատրճանակ արձակել, թուր կախել, գյուղի երիտասարդների հետ քեֆեր անել, հարսանիք ու պար գնալ, քավոր ու խաչեղբայր դառնալ, երգել, հասակավոր երևալու ձգտումով գինի ու օղի խմել, գյուղի աղջիկներին ընծաներ տալ ու ստանալ, ոտանավորներ ու նամակներ գրել, ճառ ասել, բայց սիստեմատիկ ու տնական աշխատանքի բոլորովին սեր չուներ□ (Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, կազմեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Վ. Պարտիզունի, Երևան, 1964, էջ 98): Մի հատված էլ բերենք Ներսես եղբոր ծավալուն հուշագրությունից. «Մեծ եղբայրս՝ Ղազարոսը սովորում էր Ներսիսյան դպրոցում և ամեն ամառ տուն գալով մեզ բոլորիս զարմացնում էր իր ճոճռան կոշիկներով, «քաղքցու» (աշակերտական) շորերով և Թիֆլիսից հետը բերած հազար ու մի զիզի-պիզի իրերով, ինչպես գույն-գույն գրչակոթեր, գունավոր մատիտներ, գունավոր արծաթազօծ և ոսկեզօծ թղթեր և այլն: Միայն ամառվա ամիսներին էր գյուղում լինում, այն էլ մեծ մասը դուրսն էր ժամանակ անցկացնում: ... Ինքը, Ղազարոսը, որ այդ ժամանակ արդեն 17–18 տարեկան երիտասարդ էր, բարձր դասարանի աշակերտ, շատ էր սիրում գույնզգույն փայլուն իրեր, որով և մեծ անախորժություն պատճառում հորս, որի կարծիքով «դասերը թողած՝ ծրտի-պրտի բաների է տվել խելքը»» (նույն տեղում, էջ 114):*

րով ներկայացվում է հայրենի Գանձան, Սուքիաս Տեր-Գրիգորյանի գերդաստանը, գյուղի հասարակությունը, հայրենական բարքերն ու սովորույթները:

Հովհ. Թումանյանին նվիրված հուշագրության մեջ Ջավախեցին ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է իր այցելությունը Թիֆլիս, ուր Ղազարոս Աղայանն իրեն ծանոթացնում է Թումանյանի հետ, իսկ ինքն էլ հայ մեծանուն բանաստեղծի հետ է ծանոթացնում այդ ժամանակ արդեն Լազարյան ճեմարանի սան իր եղբորը՝ Վահանին: Կարդալով սկսնակ բանաստեղծի գործերը և առանձնազրույց ունենալով Վահանի հետ՝ Թումանյանը դիմում է ներկաներին. «Դե՛հ, պարոննե՛ր, խնդրեմ ծանոթանաք, մեր Ջավախեցու եղբայրն է, ապագա բանաստեղծ Վահան Տերյանը: ... Տե՛ս, Ղազար, հիմա Վահանին ծանոթացնելիս ասում ենք Ջավախեցու եղբայրն է, եթե չաշխատես առաջ գնալ, շատ շուտով քեզ ծանոթացնելիս պետք է ասենք՝ բանաստեղծ Վահան Տերյանի եղբայրն է... »[3]: Ինչպես գրում է Ջավախեցին՝ «Հովհաննեսի գուշակությունը բառացի կատարվեց»: Այնուհետև նա ներկայացնում է Թումանյանի այցը Ախալքալաքի գավառ (1901 թ. օգոստոսի երկրորդ կեսին), ուր վերջինս Ջավախեցու ուղեկցությամբ Ախալքալաքից մեկնում է Գանձա՝ նպատակ ունենալով տեսնել Փարվանա լիճն ու կախարդական փերիներին: Այդ անմոռանալի այցելության ժամանակ հենց Ղազարոսենց տանն էլ մեծ լոռեցին գրում է իր անմահ պոեմի նախերգանքը, որի առաջին քառատողն արտասանում է սեղանի շուրջը բոլորած գանձացիների առջև.

Բարձրագահ Աբուլն ու Մրթին սարեր
Մեջք մեջքի տրված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր՝
Բրոնած պահում են մի ուրիշ աշխարհ ...[4]

Անհնար է չհիշատակել նաև Հովհ. Թումանյանի այն խոսքերը, որոնք նա արտաբերել է Ախալքալաքից Գանձա ճանապարհին: Երբ ուշ գիշերով հասնում են Ս. Հովհաննու սարի կատարին, Թումանյանը, շողշողացող Փարվանայի ու Սաղամոյի արծաթափայլ ալիքների զմայլանքից քարացած, սարի շուրջբոլորը քնած գյուղերի՝ Գանձայի, Փոկայի, Փարվանայի, Չաշկայի (այժմ՝ Տամբովկա), Սաթխայի, Արագյալի, Գորելովկայի, Մեծ ու Փոքր Խանչալիների, Հեշտիայի, Ուճմանայի, Նամզարայի, Մեծ ու Փոքր Գոնդուրաների, Օրոճալարի և Ղառումայի տեսարանի առջև ձեռքերը կրծքին խաչած բացականչում է. «Ղազա՛ր, էսպես բան կլինի՞, ես կարծում էի, թե Լոռուց գեղեցիկ տեղ չկա աշխարհում: Ձեր էս Ջավախքն անցավ Լոռուց... էն էլ առանց ծառ ու թփի՞... բա էսպես էլ բան կլինի՞... Հայ վա՛խ, մի շիշ կարմիր գինի ... ի՛նչ տեղն է ...»[5]:

Նկատենք, որ Ջավախեցին և Թումանյանը, մինչ Գանձա ու Փարվանա ուղևորվելը, 1901 թ. հուլիս-օգոստոսին հանդիպել են նաև Ախալցխա գավառի

---

[3] *Ջ ա վ ա խ ե ց ի. Փարվանայի ափին.– Հովհաննես Թումանյանը ժամանակակիցների հուշերում (այսուհետև՝ ԹԺՀ), Երևան, 1969, էջ 428:*

[4] *Նույն տեղում, էջ 434:*

[5] *Նույն տեղում, էջ 432:*

Ուրավել առողջարանում[6]: Անվանի մտավորական, հրատարակիչ, դրամատուրգ և Ջավախքի առաջադեմ գործիչներից Վարդան Շահպարոնյանը Թումանյանին նվիրված իր հուշերում գրում է. «1901 թ. հուլիսին մենք մի քանի ընկերներով (ինժեներ Հովհ. Կարապետյան, Ջավախեցի, ես և ուրիշներ) էքսկուրսիա էինք կազմակերպել և Ախալքալաքից անցել Ախալցխայի շրջանը: Ի միջի այլոց, եղանք նաև Ուրավելում: Այնտեղ էր և մեր սիրելի բանաստեղծը: Ես մինչ այդ անձնապես ծանոթ չէի նրա հետ. այդտեղ ծանոթացա և, մի քանի օր, ընկերներով միասին, շարունակ մոտն էինք լինում: Թեև եկել էր հանգստանալու, բայց մենք նրան մեզ հետ տանում էինք սարեր ու ձորեր և խաղով, պարով ու զանազան բացօթյա զվարճություններով ժամանակ անցկացնում»[7]: Սիրելի բանաստեղծը Ջավախեցիենց խմբի անդամներին բնորոշող բանաստեղծություն է հորինել և արտասանել Ուրավելի անմոռանալի երեկոներից մեկում, անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանի աներոջ՝ ախալքալաքցի Հարություն Հարությունյանի տանը օգոստոսի 6-ին կազմակերպված ճաշկերույթի ժամանակ[8]: «Ճաշկերույթն անցավ շատ աշխույժ և ուրախ. եղան ճառեր, կատակներ և այլն. ուրախ տրամադրության մեջ էր և մեր սիրելի Հովհաննեսը: Նա, ի միջի այլոց, մեր խմբի համար հենց տեղն ու տեղը մի երգիծաբանական ոտանավոր հորինեց և արտասանեց, ամեն մեկիս տալով համապատասխան բնորոշում: Այդ ոտանավորը ես երկար ժամանակ պահում էի, բայց հետագայում կորցրի»[9],– վերհիշում է Վ. Շահպարոնյանը:

Մինչ այս այցելությունն Ախալցխա և հանդիպումները Հովհ. Թումանյանի հետ, Ջավախեցին նամակ է գրել Գանձայից՝ բանաստեղծին հրավիրելով այնտեղ: Վերջինս նամակը ստանում է հուլիսի 18-ին[10]: Վ. Շահպարոնյանը գրում է, որ Ախալցխայի գավառ են այցելել 1901 թ. հուլիսին, ապա նշում, որ բանաստեղծը հրաժեշտ է տվել իրենց և դուրս եկել Ուրավելից[11]: Հայտնի է, որ Հովհ. Թումանյանը Ուրավելից մեկնել է 1901 թ. օգոստոսի 7-ին[12]: Ստացվում է, որ Ջավախեցու խումբը Ախալցխայի գավառ է այցելել հուլիսի վերջերին և այնտեղ մնացել մինչ օգոստոսի կեսերը, քանի որ Թումանյանի՝ Աբասթումանից Ախալքալաք այցի օրերին նրանք արդեն վերադարձել էին[13]: Փաստորեն, Ջավախեցին և՛ նախօրոք գրված նամակով, և՛ Ուրավելում հանդիպման ժամանակ, և՛ Գանձայից այցելելով Ախալքալաք (երբ Թումանյանն արդեն Ախալքալաքում էր)[14]՝ բանաստեղծին հրավիրել է հայրենի Գանձա: Հավելենք նաև, որ

---

[6] *Ս. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Թումանյանի ճանապարհորդությունները 1901 թվականին.— ՊԲՀ, 2008, -3, էջ 61–68:*

[7] *Վ. Շ ա հ պ ա ր ո ն յ ա ն. Անմոռանալի օրեր.– ԹԺՀ, էջ 416–417:*

[8] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 9, Երևան, 1997, էջ 271:*

[9] *Վ. Շ ա հ պ ա ր ո ն յ ա ն. նշվ. հոդվ., էջ 417:*

[10] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 9, էջ 258: Ենթադրվում է, որ նամակը Գանձայից պետք է գրած լինի Ջավախեցին (տե՛ս նույն տեղում, էջ 595):*

[11] *Վ. Շ ա հ պ ա ր ո ն յ ա ն. նշվ. հոդվ., էջ 417:*

[12] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 9, էջ 271:*

[13] *Վ. Շ ա հ պ ա ր ո ն յ ա ն. նշվ. հոդվ., էջ 417:*

[14] *Ախալքալաքից Օլգա Թումանյանին ուղղված 1901 թ. օգոստոսի 21-ով թվագրված նամակում Հովհ. Թումանյանը գրում է. «Նամակս հենց վերջացրի, ուզեցի փակել, մի գյուղից մարդիկ եկան հրավիրելու իրենց գյուղը. չկարողացա ոչ մի կերպ մերժել. վաղը գնալու ենք»*

Ջավախեցին Թումանյանին է տվել «Հազարան բըլբուլ» հեքիաթի երկու տարբերակ, որոնցից մեկը նա լսել և գրի է առել գանձացի Պատշինոնց Ավենից, մյուսը՝ սաթխացի դուլա Կարոյից[15]:

Ջավախեցու առաջին ստեղծագործություններից է «Շեյխ Ջավադ (Պատկեր քրդական կյանքից)» պատմվածքը, որը 16 էջանոց առանձին գրքույկով լույս է տեսել Թիֆլիսում 1899 թ.[16]: Նույն թվականից նա արդեն □Մշակ□ թերթում հանդես էր գալիս հրապարակումներով, որոնցից առաջինը կրում է □Չարիքի արմատը (Նամակ Ախալքալաքից)□ վերնագիրը[17]: Նշենք, վերոնշյալ գործերի տակ Ջավախեցին դեռևս ստորագրում էր «Ղազարոս Տեր-Գրիգորյան» կամ «Ղազարոս Տեր-Գրիգորյանց» ձևով: «Ջավախեցի» ստորագրությանը հանդիպում ենք երկու ամիս անց՝ նույն թերթի էջերում[18], ուր նրա նամակները, հոդվածներն ու այլ հրապարակումները, որոնք նա իր քահանայության և ուսուցչության տարիներին գրում էր Ախալքալաքից, առավել հաճախակի տպագրվում են մինչ 1903 թ., հավանաբար, մինչ իր ձերբակալումն ու □հակապետական արարքների□ համար Կուրսկի նահանգի Շչիգրի քաղաք հինգ տարով աքսորվելը: Հոդվածներում Ջավախեցին անդրադառնում է այն բոլոր սուր ու կնճռոտ հարցերին, որոնք այդ տարիներին հուզում էին ջավախահայությանը: Խստագույնս քննադատում էր շահագործող բոլոր ցեցերին՝ չինովնիկներ, վաշխառուներ, մանր կալվածատեր աղաներ ու հարկահավաքներ, ովքեր հասարակ գյուղացուն հասցրել էին չքավորության և անել վիճակի, անգամ չէր խուսափում նրանց ներկայացնել իրենց իսկական անուն-ազգանուններով: Այդ առումով ուշագրավ է Ջավախեցու հուշագրության հետևյալ դրվագը. երբ «Մշակի» խմբագրատանը առաջին անգամ հանդիպում է խմբագիր Ալ. Քալանթարին, վերջինս գովեստով է խոսում իր դիմաց նստած թղթակցի մասին և ասում. «... Այնքա՛ն հետաքրքրությամբ ու աշխուժով կարդացվում են ձեր պատկերները, որ կարծես իսկապես կենդանի մարդիկ լինեն պատկերածդ տիպերը ...»: Ջավախեցին միամիտ զարմանքով վստահեցնում է, թե դրանք ինչպե՞ս կարող են չլինել իրական անուններ և մարդիկ. « ... պատկերներիս մեջ հիշված Կարո աղան Մեծ Գոնդուրա գյուղի կալվածատեր աղան է ու նկարագրածս դեպքերն էլ իր իսկական արարքները»: Հանդիպումն ավարտվում է խմբագրի զարմացական բացականչություններով, իսկ Ջավախեցին դուրս է գալիս նրա մոտից՝ ծանր ապրումներով մտորելով այն մասին, թե « ... ախր ինչպե՞ս չի կարելի ճշմարտությունն ասել, թերթերում կարդացածներս սու՞տ բաներ են... էլ ինչու՞ գրեմ, եթե սուտ պիտի գրեմ ...»[19]:

(Հովհ. Թումանյան. ԵԼԾ, հ. 9, էջ 275): Իր մեկ այլ նամակում բանաստեղծը նշում է, որ Գանձայում մնացել է 3 օր (նույն տեղում, էջ 277):

[15] *Ջավախեցի. Փարվանայի ափին, էջ 429: Հեքիաթի այս և տասնյակ այլ տարբերակների հիման վրա Հովհ. Թումանյանը մտադիր էր գրել ընդարձակ պոեմ. ծրագիր, որն այդպես էլ չիրականացավ: Մեզ են հասել պոեմի առանձին հատվածներ:*

[16] *Գրքույկը մաշված և քայքայված վիճակում գտնվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գրադարանում:*

[17] *«Մշակ», 30. IX. 1899:*

[18] *«Մշակ», 26. XI. 1899:*

[19] *Ջավախեցի. Փարվանայի ափին.– ԹԺՀ, էջ 425:*

Ինչևէ, իրար հետևից «Մշակում» տպագրվում են «Գյուղացու ցավերից»[20], «Երկրաշարժի տեղում (Նամակ Բարալեթ գյուղից)»[21] հրապարակումները և հոդվածները, որոնցում, ի թիվս ջավախքցի գյուղացուն հուզող խնդիրների, անդրադարձ կա նաև 1899 թ. դեկտեմբերի 19-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի պատճառած վնասներին: Այցելելով երկրաշարժից տուժած գյուղերը՝ Զավախեցին գրի էր առել այն ամենը, ինչ տեսել և զգացել է, որոնց հիման վրա էլ 1900 թ. Թիֆլիսում հրատարակվում է նրա «Զավախքի աղետը (19 դեկտեմբերի, 1899 թ., ականատեսի տպավորություններից)» գրքույկը (32 էջ): 1903 թ. Թիֆլիսում առանձին գրքույկով հրատարակվում է նաև «Կրակը» հուզիչ պատմվածքը (32 էջ), որը մինչ այդ տպագրվել էր «Մշակում»[22]:

Տնական ընդմիջումից հետո «Մշակում», Զավախեցուն վերստին հանդիպում ենք 1908 թ.[23]: Նամակ – թղթակցությունները հյուսիսկովկասյան Մոզդոկից են, ուր նա տեղի հայոց դպրոցներում աշխատում էր իբրև ավագ ուսուցիչ, այնուհետև՝ տեսուչ:

Աքսորավայրում՝ Շչիգրի քաղաքում, Զավախեցին, ով ապրում էր այնտեղ իր ընտանիքի հետ, 1904 թ. և 1905 թ. սկզբներին գրում է պատմվածքներ, իսկ հուշերում հուզիչ կերպով նկարագրում է փոքր եղբոր՝ այդ ժամանակ Լազարյան ճեմարանի վերջին դասարանների սան Վահանի այցելությունն իրեն: Ճեմարանի դասատու Կ. Կուսիկյանն ու բանաստեղծ Ա. Ծատուրյանը, իմանալով Վ. Տերյանի ցանկության մասին, 60 ռուբլի են հանգանակում և Սբ. Ծննդյան արձակուրդներին նրան ուղարկում Շչիգրի՝ աքսորյալ եղբորը տեսակցության: Իհարկե, աննկարագրելի է լինում Զավախեցու հրճվանքը, երբ բուք-բորանին, «հայրենիքից հեռու՛, օտար ու անհյուրընկալ քաղաքում», ուր հիմնական «հյուրերը» ցարական բիրտ ոստիկաններն էին, հանկարծ տեսնում է իր պաշտելի եղբորը. «... Եկվորը, սառած ոտները թափ տալով, բարձրանում է մեր պատշգամբը: «Հոփա՛ ըս է, հայրի՛կ, Վանիկ հոփարս (հորեղբայրս)»: Երեխաներն ուրախությունից սրտաճաք վազեցին ներս, քաշքշելով իրենց հետ և «հոփարին»: Վահանը 15 օր մնաց ինձ մոտ ...»[24]:

Զավախեցին աքսորավայրում հինգ տարի չի մնում, վերադառնում է ավելի շուտ և արդեն 1905 թ. սեպտեմբերին Զավախեցու նամակներին հանդիպում ենք Թիֆլիսում հրատարակված «Արշալույս» թերթում՝ գրված Ախալքալաքից: «Արշալույսի» էջերում նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբերին տպագրված նամակները գրված են Մոզդոկ քաղաքից: Դատելով այդ նամակներից՝ նա այդ քաղաք է տեղափոխվել, հավանաբար, 1905 թ. ուշ աշնանը: 1908 թ. «Մշակում» զետեղված մի թղթակցության մեջ (10 հունվարի) Զավախեցին նշում է, որ 1907 թ. ապրիլի 15-ին միաձայն ընտրվել է Մոզդոկի հայոց դպրոցների ավագ ուսուցչի պաշտոնում[25]: Հավելենք նաև, որ թղթակցության տակ Զավախեցին ստորագրել է որպես Մոզդոկի հայոց դպրոցների տեսուչ:

---

[20] *«Մշակ», 4. III. 1901, 13. III. 1901, 14. III. 1901, 24. III. 1901, 29. III. 1901, 4. V. 1901, 25. VII. 1901:*

[21] *«Մշակ», 19. I. 1900, 28. I. 1900, 17. II. 1900, 2. III. 1900:*

[22] *«Մշակ», 11. VI. 1902:*

[23] *«Մշակ», 28. II. 1908, 1. IV. 1908:*

[24] *Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 251:*

[25] *«Մշակ», 28. II. 1908:*

«Մշակի» մեկ այլ համարի[26] լրահոսից տեղեկանում ենք, որ Զավախեցին նույն թվականի մարտի 6-ին Մոզդոկում նախագահել է քաղաքի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների հոգաբարձական – մանկավարժական խառը ժողովը:

1905 թ. «Մուրճի» ապրիլյան համարում (- 4) Զավախեցին տպագրել է Գանձայի և հարևան Սաղամո գյուղի (այդ ժամանակ դեռևս թրքաբնակ) միջև գոյություն ունեցած հողային վեճի մասին ակնարկ՝ «Ընկերներս» վերնագրով: Այս գործը, ինչպես նաև «Արշալույսի» ու «Մշակի» մեջ տեղ գտած մի քանի այլ իրապատումներ 1905 թ. Թիֆլիսում հրատարակվել են առանձին գրքով՝ «Պատկերներ» վերնագրով:

Զավախեցու անդրանիկ այս ժողովածուն, հիրավի, նոր խոսք էր հայ գյուղագրության մեջ, որով հեղինակն իր արժանավոր տեղը նվաճեց գյուղագիրների անդաստանում: Բանաստեղծական ռիթմով կարդացվող նրա արձակ գործերը, որոնք ներկայացնում են Զավախքի գյուղական միջավայրը, ի ցույց դրեցին ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայկական գավառների՝ XX դար թևակոխած գյուղացիության բազմաթիվ ու բազմապիսի արատավոր երևույթներ: Ապրելով ու գործելով գյուղական միջավայրում՝ Զավախեցին առաջնորդվում էր առաջադեմ, լուսավոր գաղափարներով: Գավառական խավարի մեջ նա իր համարձակ մտքերով ու գործողություններով դարձել էր հայ գյուղացու իրավունքների պաշտպանն ու արդարության, իրավահավասարության քարոզիչը: Գրքում տեղ գտած «Վարագույրի ետև» պատկերավոր խորագրով առաջաբանում Զավախեցին ընթերցողին մատնանշում է գյուղացու այն բոլոր տառապանքները, զրկանքները, թշվառությունն ու կործանարար անհավասարությունը, որոնք չեն երևում վարագույրից այս կողմ, որտեղ գյուղը հիմնականում ներկայացվում է զվարթ գույներով[27]:

1906 թ. և հետագա տարիներին Զավախեցին ակտիվորեն թղթակցում է Թիֆլիսում լույս տեսնող թերթերին: Այսպես, 1906 թ. «Աշխատանք» թերթում հրատարակվում են գյուղական միջավայրը ներկայացնող Զավախեցու՝ երկու պատմվածքը և երկու նամակ-մտահոգությունը[28], իսկ հունվար-փետրվարին «Հառաջ» թերթում[29] լույս է տեսնում երկու ակնարկ (հավանաբար, բոլորն էլ գրված Մոզդոկում): Հայ-թուրքական ընդհարումներից (նամակում ընդհարման վայրն ու թվականը չի կոնկրետացվում) տուժածներին օգնելու նպատակով կազմակերպված հանգանակության մասին Զավախեցու մեկ թղթակցությանը՝ 1907 թ. մարտի 10-ի թվագրությամբ, հանդիպում ենք «Ժամանակ» թերթում՝ դարձյալ գրված Մոզդոկում[30], իսկ տարվա վերջին նս մեկ ակնարկ՝ «Գրական վաշխառուներ» վերտառությամբ, տպագրվում է «Անկախ մամուլում»[31]: 1908 և 1910 թթ. Զավախեցին «Հասկեր» ամսագրում

---

[26] *«Մշակ», 1. IV. 1908:*

[27] *Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979, էջ 824–827:*

[28] *«Աշխատանք», 5. II. 1906, 16. IV. 1906, 13. IX. 1906, 12. XII. 1906:*

[29] *«Հառաջ», 28. I. 1906, 9. II. 1906:*

[30] *«Ժամանակ», 29. III. 1907:*

[31] *«Անկախ մամուլ», 28. XII. 1907:*

հրապարակում է չորս բանաստեղծություն[32], 1910 թ. ևս մեկ բանաստեղծություն տպագրվում է «Աղբյուր» պատկերազարդ ամսագրում[33]:

1910–1917 թթ. Զավախեցին թղթակցում է «Հորիզոնին»: Հենց 1910 թ. առաջին համարներում տպագրվում է «Մոռացված գավառ» հոդվածաշարը (չորս հոդված), որոնցում հեղինակն անդրադառնում է Ախալքալաքի գավառում տիրող իրավիճակին, լայնորեն ներկայացնում ռուսաստանյան այդ ծայրագավառի տնտեսական զարգացման հարցեր՝ կրթամշակութային, սոցիալական ոչ բարվոք վիճակի համար մեղադրելով նաև հայ մեծահարուստ բարերարներին. «Ախալքալաքը խորթ զավակի պես մոռացված է և հայ գործիչներից, բարերարներից, հայ հարուստներից ... Մինչդեռ Ախալքալաքն իր կաթնատնտեսական արդյունաբերութեամբ մրցակից չունի: Ալեքսանդրապոլի Ղարաքիլիսա ամառանոցն են շտապում մեր գյուղատնտեսները դասախոսություններ կարդալու ու մենք մեր 76 հազար հայ գյուղացիության հետ դրանցից մեկն ու մեկի երեսն էլ չտեսանք ... 76 հազար միայն հայ բնակչություն և ոչ մի միջնակարգ դպրոց, 72 հայ գյուղերում միայն երեք ծխական մեդասյան դպրոցներ կան և այն էլ պահում են Բարեգործ. Ընկերության (խոսքը Կովկասի հայոց բարեգործական ընկերության մասին է, որն Ախալքալաքում ուներ իր տեղական ճյուղի վարչությունը – Վ. Ս.) նպաստներով ...»[34]:

1910 թ. «Հորիզոն» թերթում տպագրված Զավախեցու բոլոր թղթակցությունները գրված են Ախալքալաքից: Դրանցից մեկը տեղեկացնում է, որ նա եղել է քաղաքի հայոց եկեղեցական ծխական հոգաբարձության քարտուղարը[35]: Մեկ այլ նյութից էլ պարզվում է, որ հոկտեմբերի երեքին Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ախալքալաքի վարչության անդամ Զավախեցին հանդես է եկել ճառով, որի առիթը կազմակերպության Ախալքալաքի ճյուղի ջանքերով հիմնված կարուձևի արհեստանոց-դպրոցի բացումն էր[36]:

Որպես Ախալքալաքի ու Ծալկայի հայ գյուղացիության կողմից ընտրված ներկայացուցիչ-պատգամավոր՝ Զավախեցին 1910 թ. հոկտեմբերի 10-ին հրավիրվել է Թիֆլիս՝ մասնակցելու թեմական-պատգամավորական ժողովներին, ուր ընտրվելու էին Ներսիսյան դպրոցի հոգաբարձուներ[37]:

1911 թ. հունվարի մեկին լույս տեսած «Հորիզոնի» համարում նշվում է, որ թերթը հրատարակվելու է Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Լեոյի և Շիրվանզադեի սերտ աշխատակցությամբ, իսկ մշտական աշխատակիցների ցանկում, ուր ներկայացված էր ժամանակի հայ մտավորականության գրեթե ողջ աստղաբույլը, իր պատվավոր տեղն ուներ Զավախեցին:

Զավախքի գյուղական ցավերի ու խնդիրների մասին է բարձրաձայնում 1911 թ. «Հորիզոնի» ապրիլյան համարներում լույս տեսած «Գավառի ձայնը» շարքը[38]: Նույն թվականի մարտի 26-ի նամակից երևում է, որ Զավախեցին եղել է Ախալքալաքի հայոց եկեղեցական–ծխական երկսեռ երկդասյա դպրոցի

---

[32] *«Հասկեր», օգոստոս, 1908, - 8, հունվար, 1910, - 1, մայիս, 1910, - 5, դեկտեմբեր, 1910, - 12:*
[33] *«Աղբյուր», հունվար, 1910, - 1:*
[34] *«Հորիզոն», 16. I. 1910:*
[35] *«Հորիզոն», 19. V. 1910:*
[36] *«Հորիզոն», 9. X. 1910:*
[37] *«Հորիզոն», 29. IX. 1910:*
[38] *«Հորիզոն», 2. IV. 1911, 6. IV. 1911, 10. IV. 1911:*

հիսնամյակի հոբելյանական հանձնաժողովի անդամ[39]*: Մայիսի 8-ին Արսեն քահանա Բլրցյանի գրած թղթակցության մեջ նշվում է, որ նույն օրը Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցում տեղի ունեցած քաղաքի, համանուն գավառի և Ծալկայի շրջանի գյուղական ծխական ներկայացուցիչների ժողովում ընտրվելու են պատվիրակներ, որոնք նոյեմբերին պետք է Թիֆլիսում մասնակցեին ժողովին: Այդ ժողովները գումարվել են 1911 թ. դեկտեմբերի 11-ին Էջմիածնում տեղի ունենալիք կաթողիկոսական ընտրությունների առիթով, և ընտրված երկու պատվիրակներից մեկը եղել է Ջավախեցին*[40]*:*

Ինչպես բոլոր գավառներում, Ջավախքում ևս մեծ ցավով ընդունվեց 1911 թ. հունիսին վախճանված հայ մեծ գրող Ղազարոս Աղայանի մահվան լուրը: Ախալքալաքի մտավորականությունը ժողով է գումարում, ուր որոշվում է լիազորել Ախալքալաքի հայոց եկեղեցական-ծխական դպրոցի ուսուցիչ, Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ախալքալաքի ճյուղի վարչության անդամ Ջավախեցուն՝ ներկա գտնվելու Ղ. Աղայանի թաղման արարողությանը[41]*: Մեկ տարի անց, Ջավախեցին տպագրում է «Տխուր խոհեր» ակնարկաշարը՝ նվիրված մեծն Ղ. Աղայանին*[42]*:*

1911 թ. Ջավախեցին Թիֆլիսի «Սուրհանդակ» թերթում իրեն յուրահատուկ անկեղծությամբ ներկայացնում է իր ապրումներն ու զգացումները, որոնք ունեցել է թիֆլիսյան իր մեկ ուղևորության ընթացքում: Ակնարկաշարքը կոչվում է «Գավառացու տպավորություններից»[43]*: Նույն թերթի էջերում, մինչ այդ, մեկ այլ առիթով լսվել էր «Գավառի ձայնը»՝ դարձյալ Ջավախեցու միջոցով*[44]*:*

1912 թ. դեկտեմբերի 3-ին Ախալքալաքում վախճանվում է տնտեսագետ, հրապարակախոս, գրականագետ և հասարակական գործիչ Ավետիք Արասխանյանը, ով, կարճ ժամանակ լինելով Ախալքալաքի ծխական դպրոցի տեսուչ, անսահմանորեն սիրվել էր տեղի հասարակության կողմից: Ջավախեցին ցավով է հայտնում Ա. Արասխանյանի մահվան գույժը, նրա անունով հեռագրեր են ստացվում Թիֆլիսի գրական-հասարակական հայտնի գործիչներից՝ խնդրելով իրենց անունից ներկա լինել հուղարկավորությանը կամ ծաղկեպսակ դնել: Մինչ Ա. Արասխանյանի աճյունը Թիֆլիս տեղափոխելը, Ախալքալաքում տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն, այնուհետև՝ պատարագ, որտեղ (նաև որպես «Հորիզոնի» թերթի ներկայացուցիչ) դամբանականով հանդես է գալիս Ջավախեցին[45]*:*

1916 թ. «Հորիզոնի» էջերում Ջավախեցին անդրադառնում է նաև հույժ կարևոր մի հարցի, որն այսօր էլ օրախնդիր է Ջավախքում: Դա վարչական օղակներում հայերենի կիրարկման խնդիրն էր, որը դեռ ցարական կարգերի օրոք համընդհանուր ռուսականացման պայմաններում խիստ մտահոգել է մտավորականին: «… երբ դատավորը հայ դատարանում կխոսի, կգրի հայ

[39] *«Հորիզոն», 6. IV. 1911:*

[40] *«Հորիզոն», 13. V. 1911, 14. V. 1911:*

[41] *«Հորիզոն», 23. VI. 1911, 25. VI. 1911:*

[42] *«Հորիզոն», 7. VII. 1912, 23. IX. 1912:*

[43] *«Սուրհանդակ», 10. VI. 1911, 14. VI. 1911, 18. VI. 1911, 23. VI. 1911, 25. VI. 1911, 2. VII. 1911, 3. VII. 1911:*

[44] *«Սուրհանդակ», 17. III. 1911:*

[45] *«Հորիզոն», 9. XII. 1912, 13. XII. 1912:*

լեզվով, փաստաբանը մեղադրյալին կպաշտպանի հայ *լեզվով, հայ մարդն իր գավառապետին ցավը կասի* հայ *լեզվով ու պատասխանը կստանա նույն լեզվով, երբ բժիշկը հայկական հիվանդանոցում ստիպված կլինի գործերը վարել* հայ *լեզվով ու դրա համար զրնգան ոսկիներ կստանա,– այն ժամանակ, ո՛չ - միայն* հայերեն *խոսելու «ախորժակն» էլ կբացվի ու ախորժանքն էլ, այլև կաշխատի ամեն կերպ զարգացնել, կատարելագործել այն լեզուն, որ իրեն* «խեր» *(ընդգծումները Ջավախեցունն են –* Վ. Ս.*) է տալիս, հաց է տալիս»*[46]*: Շուրջ կես դար էր անհրաժեշտ, որ Արևմուտքում հռչակագրերի և կոնվենցիաների տեսքով իրավական ձևակերպում ստանար բնիկ ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանության խնդիրը: Ջավախեցին, գիտակցելով ազգերի զարգացման ճանապարհին վերջիններիս լեզվի պահպանման և զարգացման որոշիչ դերն ու նշանակությունը, հանգում է այն եզրակացության, ըստ որի՝ «ինչպես հայ լեզվի, նույնպես և* մեր բոլոր ազգային արժեքների *անաղարտ պահպանության ու զարգացման միակ ուղիղ ու վճռական միջոցը դա է՝* ստեղծել հայկական ինքնուրույն ազգային կյանք *(ընդգծումները Ջավախեցունն են –* Վ. Ս.*)»*[47]*: Ջավախեցու սույն մոտեցումը ոչ այլ ինչ է, քան հայկական գավառներում մշակութային, լեզվական ինքնավարության ստեղծման առաջարկ, որը շուրջ մեկ դար անց, մեր օրերում էլ արտացոլված է ջավախահայության կողմից Վրաստանի իշխանություններին ներկայացված ինքնավարության պահանջների վերաբերյալ փաստաթղթերում*[48]*: Հավելենք, որ Ջավախեցու այս դիտարկումները լայն արձագանք գտան մամուլում և հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Մ. Վարանդյանի կողմից հանդիսացան քննադատական մոտեցումների ի հայտ գալու պատճառ*[49]*:*

1913 թ. Ջավախեցին տեղափոխվում է Անդիժան քաղաք (ներկայիս Ուզբեկստանի շրջկենտրոններից է), որտեղից շարունակում է թղթակցել «Հորիզոնին»: Նույն թերթում 1916 թ. հրատարակում է մեկ ակնարկ, 1917 թ.՝ մի քանի հեռագրեր, որոնցից տեղեկանում ենք Ախալքալաքում տեղի ունեցած գյուղացիական համագումարի մասին: Համագումարը, որը նախագահում էր Ջավախեցին, որոշում է անվստահություն հայտնել գավառային կոմիսարիատին և պահանջում՝ աշխատանքից անհապաղ հեռացնել բոլոր կոմիսարներին[50]*:*

1913 թ. հունվարի 22-ին Ջավախեցին շնորհավորական նամակ է հղում հայրենի Ջավախք՝ իր ուրախությունն արտահայտելով «Ջավախք» թերթի հիմնադրման առիթով: Անհնար է առանց հուզմունքի կարդալ շնորհավորանքի տողերը, որտեղ պարզորոշ ուրվագծվում է Ջավախեցու հայրենապաշտ կերպարը. «Ողջույնս հայրենի պալար-վերքերին, արյուն-խոցերին, անուշ-խոցերին ... Ողջույն այդ անվերջ պալար-դարդերին դարեր դիմացող, իր սար ուսերին անմռունչ տանող մեր չարքաշ գյուղին ու անշուք հյուղին ... Ողջույն, բյուր ողջույն այդ արյունլվիկ դարդ ու խոցերը սրտի մրմուռով, կրակ-կսկիծով քրքրող,

---

[46] *«Հորիզոն», 24. VII. 1916:*

[47] *Նույն տեղում:*

[48] Վ. Սարգսյան. *Սամցխե–Ջավախք–Թռեղը հայ–վրացական հարաբերությունների հոլովույթում (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ.), Երևան, 2006, էջ 342–356:*

[49] *«Հորիզոն», 26. VIII. 1916, 27. VIII. 1916, 28. VIII. 1916:*

[50] *«Հորիզոն», 27. VII. 1917:*

բուժող հեգ ընկերներին ... Ես էլ հեգ պանդուխտ, հեռու՝ վաթանից, անու՛շ վաթանի կարոտս կուլամ ... ու լաց-արցունքով հայրենի հողի հուշին հիշելով հետ իրեն կուտամ՝ «Ջավախք»-ին կուտամ ... Հազար ծիլ-ծաղիկ ու հաջողություն մեր մայր Ջավախքին ... Հազար-բյուր բարև ու երկար արև մատաղ «Ջավախք»-ին ...»[51]*:*

1915–1917 թթ. Անդիժանից Ջավախեցին ակտիվորեն թղթակցում է Բաքվի «Արև» օրաթերթին: 1915 թ. երկու համարում հրատարակվում է «Տխուր խոհեր» ակնարկաշարը, որի երկրորդ մասում հեղինակի մտորումներն են հայ քաղաքական կուսակցություններից մեկի՝ Հայ հեղափոխական դաշնակցության մասին: Չընդունելով ՀՀԴ-ի հասցեին արված քննադատությունները՝ Ջավախեցին կուսակցությանը համեմատում է Քոռ Դավիթենց տան ծառայի՝ Կիրակոսի հետ, որին տեղի-անտեղի ամեն բանում մեղադրում են. «Բայց հիմա հենց որ «մի հավի քիթ արյունի» Հայաստանում թե Հայաստանից դուրս – մեղավորը «Դաշնակցությունն» է ... Ինչու՞: Որովհետև ... «Դաշնակցությունը» Կիրակոս է ...»[52]*:*

Անդիժանում ապրած տարիներին Ջավախեցին գործուն մասնակցություն է ունենում տեղի հայության կրթական ու հասարակական կյանքին: Լինելով քաղաքի արական գիմնազիայի հոգաբարձուների խորհրդի անդամ՝ մեծ ջանքեր է ներդնում, որպեսզի պետական դպրոցներում դասավանդվի հայոց լեզուն, քանզի, ինչքան էլ եկեղեցական-ծխական դպրոցավարտ սանը հայերեն սովորած մտնի պետական դպրոց, այնուամենայնիվ, նա շուտով կմոռանա մայրենին, եթե իմացածը զարգացնելու հնարավորություն չունենա: Երկար մաքառումներից հետո, ի վերջո, Ջավախեցուն հաջողվում է Անդիժանի գիմնազիաներում «կրոնի հետ մայրենի գրագիտություն դասավանդելու թույլտվությունն ստանալ Թուրքեստանի դպրոցների գլխավոր տեսչից»[53]*: Մի քանի ամիս անց՝ 1915 թ. օգոստոսին, Հայ հեղափոխական դաշնակցության կոմիտեի (հավանաբար՝ տեղական) նախագահի միջնորդությամբ և Թուրքեստանի շրջանի դպրոցական հիմնարկությունները կառավարող հոգաբարձուների խորհրդի որոշմամբ առաջարկվեց դպրոցական բոլոր հիմնարկությունների վարիչներին՝ առաջիկա ուսումնական տարվանից իրենց տնօրինության տակ գտնվող հիմնարկություններում տեղի հասարակական միջոցներով մտցնել հայոց լեզվի պարտադիր դասավանդում: Ջավախեցին, որպես առաջադեմ և ժամանակի շնչով ապրող մտավորական, չնայած ողջունում է այս իրողությունը, այդուհանդերձ, հանդես է գալիս հեղափոխական հնքով ապրող Ռուսաստանի օրենքները քննադատողի դերում. «... Ինչու՞ ռուս մանկանն իր մայրենի լեզուն պիտի ավանդվի պետական գանձարանի միջոցներով, իսկ հայ մանկանն «տեղական միջոցներով» և այն էլ □եթե կան այդպիսի միջոցներ» ...»*[54]*:*

---

[51] *«Ջավախք», 3. III. 1913:*
[52] *«Արև», 29. IX. 1915, 3. XI. 1915:*
[53] *«Արեգ», 17. II. 1917:*
[54] *«Արեգ», 30. VIII. 1917:*

1915 թ. հայ ուսուցչի, մտավորականի վիճակի մասին իր մտորումներով (նաև՝ պատմաբան Լեոյի օրինակով) Անդիժանից հանդես է գալիս Բաքվի «Արեգ» թերթում[55]:

Ապրելով ու գործելով անդրկասպյան երկրում՝ Ջավախեցին մեծ ուշադրություն է դարձրել ցեղասպանության հետևանքով հայրենազրկված և տարագիր հայրենակիցներին օգնելու խնդրին: «Արև» թերթին հղած բազմաթիվ նամակներում հրապարակում է իր կազմակերպած հանգանակությունների արդյունքները՝ «հօգուտ հայ տարագիրների ազատագրության – «Մի հայ - մի ռսկի»» կամ «հօգուտ տաճկահայ որբերի»[56]:

1917 թ. սկզբներին Ջավախեցին ստանում է եղբոր՝ Վահան Տերյանի՝ թոքախտով հիվանդանալու լուրը[57]: Անմիջապես 300 ռուբլի է փոխանցում նրան՝ կից նամակով, ուր խորհուրդ է տալիս այնքան էլ լուրջ չվերաբերվել բժիշկների ասածներին, որոնք «լուն ուղտ են շինում». «... Օրերը տաքացան թե չէ, կթռչես Գանձա՝ մեր հայրենի «սանատորիան»: Կնստես մեր չայիրի (մեր ծաղկառատ մարգագետինն է գետի ափին, ուր Վանիկը փոքր ժամանակ շատ էր սիրում ձուկ որսալ ու ողջ օրը ջրերի մեջ խաղալ – ծնթ. Ջավախեցու) ծաղկունյանց մեջ, մատղաշ գառը մորթել կտաս, կարմրախայտը ինքդ կբռնես, ինչպես փոքր ժամանակդ, խորոված ու ձուկը կուտես, կարմիր գինի կխմես ու էն ծաղկունյաց խալու վրա կքնես նու՛շ ու անու՛շ ... Թոքախտ չէ, չումա լինի կսատկի ... կդիմանա՞ մեր Գանձայի օդ ու ջրին ... Ամառս ես էլ կգամ, կընկերանամ: Բայց տե՛ս, ասածներս մի՛շտ կատարես, որ մինչև իմ գալս իմ առաջվան գունդ ու կծիկ Վանիկս դարձած լինես»[58]: Ջավախեցու խորհուրդներն իսկապես արդյունքներ են տալիս. Վ. Տերյանն աշխուժանում է, մասնակցում թիֆլիսյան մտավորականության հավաքներին, միջոցառումներին, այնուհետև մեկնում է Ղրիմ՝ առողջարան, որտեղից էլ՝ հայրենի Գանձա:

1917 թ. ամռանը Ջավախեցին գալիս է Ախալքալաք, ուր գտնվում էր Վ. Տերյանը[59]: Իրար անսահման սիրող երկու եղբայրների՝ հայրենի եզերքում այս հանդիպումը, կարճատև լինելուց զատ, վերջինն էր: Ջավախեցին Ախալքալաք է հասնում այն ժամանակ, երբ հեղափոխության թոհուբոհով ապրող Վ. Տերյանն արդեն պատրաստվում էր մեկնել Պետրոգրադ, քանի որ, ինչպես նշել է, «պետք է հեղափոխությունը հասցնել իր վախճանին...»[60]: Բնականաբար, երկար

---

[55] *«Արեգ», 27. III. 1915:*

[56] *«Արև», 7. IX. 1916, 8. IX. 1916 և այլն:*

[57] *Այդ մասին Վ. Տերյանը 1917 թ. հունվարին Պետրոգրադից նամակ է գրել եղբորը (տե՛ս Վ. Տ ե ր յ ա ն. Երկեր, Երևան, 1989, էջ 565):*

[58] *Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 260:*

[59] *Տերյանագետ, ծնունդով ախալքալաքցի Սաքո Սուքիասյանի՝ Վահան Տերյանին նվիրված հուշերում տեղ են գտել 1917 թ. ամռան մասին պատմող դրվագները, որտեղ հիշատակվում է նաև Ջավախեցին. «Չգիտեմ ինչպես եղավ, որ մի արեգակ օր, երեկոյան դեմ, Վահանը, Ղազարոսը, որ ընտանիքով նոր էր եկել Անդիժանից, մեր քաղաքացի Կոպելենց Եղիշը և դերասան Մկրտիչ Նալբանդյանը (Քցեն) եկան մեզ տեսության: Սրտագին ուրախ հանդիպումից հետո, կարծեմ Ղազարոսի առաջարկով մի քանի շիշ Կախեթի սև գինի բերել տվինք Մոսեսովների հով մառանից, քիչ մրգեղեն և հենց այդտեղ, արհեստանոցում քեֆն սկսվեց□ (Ս. Ս ու ք ի ա ս յ ա ն. Վահան Տերյանը հայրենի Ջավախքում.– Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 415–416): Ս. Սուքիասյանն այնուհետև նկարագրում է երեկույթը, երկու եղբայրների՝ Ղազարոսի ու Վահան Տերյանի՝ տարիների բաժանումից հետո անցկացրած անմոռանալի ժամերը:*

[60] *Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 262:*

են լինում Զավախեցու հորդորներն ու թախանձանքները, որ եղբայրը չմեկնի, մնա հայրենի օջախում և շարունակի հետևել իր առողջությանը, սակայն Տերյանն իր որոշման մեջ հաստատակամ էր: Անհնար է առանց հուզմունքի կարդալ Զավախեցու հետևյալ տողերը. □... Ես վաղն անպատճառ գնում եմ, երկու ամիս է գինի չեմ խմել, հայ-քրիստոնյա մարդ ես, ինքդ էլ տերտեր, ամոթ է ինձ պես անհավատին «անհաղորդ» թողնես: Դու մի պրովոդ սարքիր, ինձ մի լավ «հաղորդիր» ու մնաս բարով, գնաս բարով ասենք ... Մեկ էլ ո՛վ գիտե երբ ենք տեսնվելու ...«: Ես գիտեի Վանիկիս մանկութ համառությունը: Որքան մեղմ ու ամաչկոտ, նույնքան համառ ու իր ասածի էր: Գինի բերել տվի, սազանդար կանչեցի ու գիշերն երկուսով «քեֆ» արինք հյուրանոցի համարում ու միասին փաթաթված քնեցինք իր անկողնում: Վերջին տեսնելս էր Վանիկիս ...»[61]:

Առողջական ծանր վիճակում գտնվող Վ. Տերյանը, 1919 թ. վերջին մեկնում է Մոսկվայից և Ռուսաստանի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի հատուկ հանձնարարականով ուղևորվում է Թուրքեստան (այժմ՝ Ուզբեկստան)[62] ՝ ցանկանալով կյանքի վերջին օրերն անցկացնել իր ավագ եղբոր՝ Զավախեցու մոտ՝ Անդիժանում: Սակայն քաղաքացիական կռիվների թեժացման պատճառով գնացքը կանգ է առնում Օրենբուրգում, որտեղ էլ 1920 թ. հունվարի 7-ին վախճանվում է: Եղբոր մահվան լուրը Զավախեցին ստանում է բավական ուշացումով՝ 1921 թ. մարտին, Տաշքենդի «Կուլտուրական-կրթական միությունից» ստացած նամակով:

*... 1918 թ. Հայ հեղափոխական դաշնակցության կողմից Թիֆլիսում հրատարակվող ռուսալեզու «*Молотъ*» թերթում Զավախեցին տպագրում է Միջին Ասիայից ուղարկած մի քանի հեռագրեր, որոնցից երկուսում տեղեկացվում են ՀՀԴ Աշխաբադի մարզային ժողովի և անդրկասպյան քաղաքներում ՀՀԴ-ի ծավալած գործունեության մասին: Հեռագրերից երրորդը ներկայացնում է ՀՀԴ - թիֆլիսյան կառույցի համագումարը, քննարկված հարցերն ու ընդունված որոշումները[63]:*

Թիֆլիսյան մամուլում մինչև 1921 թ. Զավախեցին հանդես է եկել նաև «Ես – եմ» և «Զավ.» ծածկանուններով[64]: Նման ստորագրությամբ հոդվածներ, սակայն, մեզ չեն հանդիպել. հնարավոր է՝ այդպիսիք հազվադեպ են (նկատի առնենք, որ Ղ. Տեր-Գրիգորյանը հիմնականում հանդես է եկել և նրան ճանաչել են «Զավախեցի» ծածկանվամբ):

1920-ական թվականներին Զավախեցին որոշ ժամանակ ապրել է Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում[65], որտեղից թղթակցել է Թիֆլիսում հրատարակվող «Մարտակոչ» օրաթերթին: Դրանցում հիմնականում արծարծվել են

---

[61] *Նույն տեղում, էջ 263:*

[62] *Այս մասին տե՛ս Զավախեցու եղբոր՝ Ներսես Տեր-Գրիգորյանի որդու՝ Կամսար Գրիգորյանի հոդվածը. «Գարուն», 1985, -6, էջ 53. հմմտ.՝ Կ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Վահան Տերյան, Երևան, 1983, էջ 62:*

[63] «Молотъ», *3. I. 1918, 18. II. 1918: Զավախեցին հանդես է եկել որպես թերթի սեփական թղթակից: Հեռագրերից դժվար է պարզել, թե Զավախեցին թիֆլիսյան կուսակցական ժողովին անձամբ է մասնակցել, թե՞ ժողովի վերաբերյալ տեղեկությունը ստացել է մեկ ուրիշից:*

[64] *Հ. Բ. Հ ո վ ա կ ի մ յ ա ն. Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 148, 734:*

[65] *Զավախեցին Միջին Ասիայում ապրել է մերթ Անդիժան, մերթ Տաշքենդ, մերթ Կոկանդ քաղաքներում (տե՛ս Ս. Ս ա ք ի ա ս յ ա ն. Էջեր Վահան Տերյանի կյանքից, Երևան, 1959, էջ 134):*

Ուզբեկստանում բնակություն հաստատած գաղթական հայերի համայնքի խնդիրները[66]:

«Պրոլետար» թերթի «Գրական շաբաթ» հավելվածում 1930 թ. հունվարի 12-ին լույս է տեսնում Զավախեցու «Հուշեր Վահան Տերյանի կյանքից» հուշագրությունը: Համարը նվիրված է Վ. Տերյանի մահվան տասնամյակին: Հետագայում Վ. Տերյանին նվիրված Զավախեցու հուշագրությունները տեղ են գտնում մեծ բանաստեղծին նվիրված հուշերի ժողովածուում[67]:

Դժվար է հստակ ասել, թե երբ է Զավախեցին Միջին Ասիայից վերադարձել Երևան: Հայտնի է, որ 1933 թվականից նա Երևանում որպես սրբագրիչ աշխատել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագրությունում[68]: Իսկ մինչ այդ, 1930 թ. Երևանում, Ա. Տերտերյանի առաջաբանով, հրատարակվել է Զավախեցու «Պատկերներ (Բանտարկյալի հուշատետրից)» գիրքը, որտեղ հիմնականում ներկայացվում են ռուսաստանյան առաջին հեղափոխության (1905–1907 թթ.) նախօրյակին հեղինակի ձերբակալությունը, հարցաքննությունները, բանտային կյանքին առնչվող պատմություններ, մարդկային խեղված ճակատագրեր և այլն:

1936 թ. անանուն առաջաբանով լույս է ընծայվում Զավախեցու նոր գիրքը՝ կրկին «Պատկերներ» խորագրով, որում զետեղվում են 1905 և 1930 թթ. հրատարակություններում տեղ գտած գործերը: Դա Զավախեցու կարապի երգն էր. հաջորդ տարի՝ 1937 թ., նա վախճանվում է[69]:

1950 թ. Երևանում լույս է տեսնում «Հայ գյուղագիրներ» վերնագրով ստվարածավալ մի ժողովածու, որում զետեղված են նաև Զավախեցու լավագույն պատմվածքներից հինգը՝ որոշ կրճատումներով կամ խմբագրումներով:

Նկատենք, որ տարիների ընթացքում Զավախեցին կատարել է նաև բազմաթիվ թարգմանություններ, որոնցից յոթը հրատարակվել է առանձին գրքույկներով[70]:

---

[66] *«Մարտակոչ», 29. IV. 1924, 18. V. 1924, 21. XI. 1925:*

[67] *Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 225–265:*

[68] *Ա. Ի ս ո յ ա ն. Սամցխե–Զավախքի նշանավոր հայորդիները, գիրք 2, Երևան, 2008, էջ 427:*

[69] *Մահվանից առաջ՝ նույն թվականի ամռանը, Զավախեցին մեկնում է Մոսկվա և գնացքով Երևան բերում իր եղբոր՝ Վահան Տերյանի միակուռ աղջկան՝ 17-ամյա Նվարդին (տե՛ս Ն. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Կանայք Տերյանի կյանքում, Երևան, 2005, էջ 49): Նվարդ Տերյանը ծնվել է Տերյանի երկրորդ կնոջից՝ Անահիտ Շահիջանյանից, Տերյանի մահվանից մի քանի ամիս անց՝ 1920 թ. ապրիլի 28-ին, Մոսկվայում. մահացել է 1978 թ. հոկտեմբերի 12-ին: Աճյունասափորն ամփոփված է Զավախքում՝ հայրենի Գանձայում:*

[70] *Տե՛ս Ս. Բ ը կ ո վ. Գարնանացանը և սոցիալիստական մրցումը, Երևան, 1930, 62 էջ, Բ. Մ ե ն շ ո վ. Զոոտեխնիկական ձեռնարկումների կազմակերպումը կոլխոզներում, Երևան, 1931, 76 էջ, Ս. Է դ ե լ մ ա ն. Կոոպերացիան և բանվորական ընտանիքի կենցաղը, Երևան, 1931, 110 էջ, Ե. Գ ր ի գ ո ր ո վ ի չ. Հաց, աշխատանք և իշխանություն, Երևան, 1931, 94 էջ, Դ. Մ ա մ ի ն - Մ ի - բ ի ր յ ա կ. Կաթի, վարսակի շիլայի և գորշ կատվի՝ Մուրկայի մասին, Երևան, 1934, 18 էջ, Հ. Դ ի կ կ ե ն ս. Բաստիլի կալանավորը, Երևան, 1935, 24 էջ, Մ. Տ վ ե ն. Սպիտակ փղի հափշտակումը, Երևան, 1936, 63 էջ: Ե. Հ ի ր ի կ ո վ ի «Կյանքի շեմքին» պատմվածքի թարգմանությունը հրատարակվել է Բաքվի «Գործ» ամսագրում (1917, նոյեմբեր-դեկտեմբեր, - 11–12, էջ 86–113): Նույն պատմվածքն առանձին գրքույկով հրատարակվել է նաև Հ. Խաչատրյանի թարգմանությամբ. տե՛ս Ե. Հ ի ր ի կ ո վ. Կյանքի շեմքին, Բաթում, 1909, 42 էջ: Ի դեպ, □Գործ□ ամսագրի հիմնադիր-հրատարակիչներից մեկը՝ խմբագրակազմի անդամ (տե՛ս «Գործ», 1917, հունվար, -1, էջ 165–166), հասարակական-քաղաքական, գրական-մշակութային հայտնի գործիչ, Հայաստանի առաջին Հանրապետության արդարադատության նախարար, Ախալքալաքից սերված Ռուբեն Դարբինյանը*

Ամփոփենք. Ջավախեցին ապրեց ծանր, դժվարին ու անհանգիստ կյանքով: Հայկական կամ օտար վայրեր՝ Ախալքալաք, Շչիգրի, Մոգդոկ, Անդիժան, Տաշքենդ և այլն, տեղափոխվելուց կարճ ժամանակ անց նա դառնում էր տեղի կրթական, հրատարակչական, լուսավորական կյանքի կազմակերպիչն ու առաջնորդողը: Հայ մամուլում և առանձին գրքերով տպագրած նրա պատմվածքներում, իրապատումներում, հրապարակումներում, հոդվածներում, նամակներում, թղթակցություններում ու ակնարկներում արտացոլված են XX դարասկզբի հայ գավառական, գյուղական միջավայրը, հայ դպրոցին, ուսուցչին, մտավորականին, և, ընդհանրապես, տվյալ գավառում ապրող հայությանը հուզող խնդիրները: Իրավահավասարության և արդարության գաղափարները Ջավախեցու կյանքի ուղենիշն էին, որոնց տարածումը մեծ մտավորականի համար դարձել էր ժամանակի հրամայական:

Գրական իր անվանը համահունչ՝ Ջավախեցին մինչև կյանքի ավարտը մնաց որպես իր ծննդավայրը ներկայացնող մտավորական: Չնայած կյանքի որոշ հատվածներ ապրեց ծննդավայրից դուրս, սակայն Ջավախքի հետ նրա հոգևոր կապը մնաց անսասան, որն իր արտացոլումը գտավ նաև գրական ժառանգության մեջ: Փաստենք նաև, որ Ջավախեցու՝ հայրենի Ջավախքի տարբեր հիմնահարցերի հանդեպ արտահայտած մի շարք մտահոգություններն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, քանի որ, կերպարանափոխվելով իրենց ձևի մեջ, այդ խնդիրները գրեթե նույն բովանդակությամբ հասել են մեր օրերը: Դրանց վերաբերող շատ գաղափարներ ու առաջարկված ծրագրեր այսօր էլ՝ մեկդարյա հեռավորությունից քննելիս, ոչ միայն չեն հնացել, այլև ունեն կիրառական մեծ ներուժ:

ДЖАВАХЕЦИ: ЖИЗНЬ И ТВОРЧЕСКИЙ ПУТЬ
(К 140-летию со дня рождения)

ВАГЕ САРКИСЯН

Р е з ю м е

Джавахеци [Газарос Тер-Григорян (1874–1937 гг.)] – учитель, многолетний корреспондент армянской прессы, священник, выдающийся представитель армянских общественно-интеллектуальных кругов, старший брат великого армянского поэта Ваана Теряна. Учился в школе Нерсисян в Тифлисе, преподавал в родном Джавахке; за активную деятельность был сослан царским правительством в Курскую область, г. Шчигри, затем

(Արտաշես Չիլինգարյան) իր հիմնադրած և 1922 թ. ի վեր Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրում տպագրած հուշագրության մեջ՝ Վահան Տերյանին նվիրված հատվածներից մեկում, հիշատակել է նաև Ջավախեցուն. «Վահան Տերյանի ընտանիքը կճանչնայի իր հայրենի Գանձա գյուղեն, ուր պտույտի գացած էի Հարություն եղբորս հետ 1902-ի ամառը: Հոն իջևանած էինք գյուղի քահանային մոտ, որ Վահանի հայրն էր: ... Հոն էր այն ատեն Վահանի մեծ եղբայրը, որ ուսուցիչ էր և գյուղական պատմվածքներ կգրեր «Մշակի» համար Ջավախեցի ստորագրությամբ և որ վերջեն քահանա ձեռնադրվեցավ» [Կյանքիս գրքեն (Փշրանքներ իմ հուշերեն), գրեց՝ Ռուբեն Դարբինյան.– «Հայրենիք», 1958, թիվ 7, հուլիս, էջ 8]:

жил и занимался литературной, педагогической, общественной деятельностью в городах Моздок, Ахалкалаки, Андижан, Ташкент. В последние годы жизни Джавахеци жил и творил в Ереване. Он опубликовал несколько сборников, брошюр, сотни публицистических статей, очерков, писем и переводов.

JAVAKHETSI: LIFE AND CREATIVE DEVELOPMENT
(To the 140th birth anniversary)

VAHE SARGSYAN

S u m m a r y

Javakhetsi [Ghazaros Ter-Grigoryan (1874–1937)] a distinguished representative of public and intellectual circles, was a teacher, an experienced correspondent of the Armenian press, a priest, famous Armenian poet Vahan Teryan's eldest brother. He went to Nersisyan school in Tiflis, taught in his native Javakhk and was banished to the province of Kursk, town of Shchigri, by the tsarist government because of his vigorous public activity. Then he lived and led a literary, pedagogical and active public life in Mozdok, Akhalkalak, Andijan and Tashkent. He lived and created in Yerevan for the last years of his life. He published several collected works, brochures, hundreds of publicistic articles, essays, letters and translations.